

Հոդվածում հարուստ սկզբնաղբյուրների հիման վրա ներկայացվում է գեներալ Վ.Մադաթովի գործունեությունը Շամքորի ճակատամարտի ժամանակ:

GENERAL MADATOV AND DON COSSACKS AT THE BATTLE OF SHAMKOR SEPTEMBER 3, 1826.

Aleksey Zakharevich
Summary

Based on the rich sources the article presents the activities of general V. Madatov during the battle of Shamkor.

ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ ԳԱՂԹԱԾ ՀԱՅԵՐԸ ԲԱՔՎՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Գևորգ Ստեփանյան

*Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ պատմության իստիտուտ*

Վան-Վասպուրականի հերոսական հայությունը փորձություններով լի ժամանակաշրջան ապրեց 1896-1897 թթ., ապա և՛ Առաջին աշխարհամարտի տարիներին:

Աբդուլ Համիդի կազմակերպած կոտորածներից փրկված ավելի քան 500 վանեցի գաղթականներ 1896 թ. աշնանը, ապա 1897 թ. հոկտեմբերին ապաստան գտան Բաքվում, ուր մնացին ընդհուպ մինչև 1898 թ. մայիսի վերջերը¹: Բաքու քաղաքի Սբ. Աստվածածին եկեղեցու ավ. քին. Աբգար Տեր-Հարությունյանցի վկայությամբ՝ «1896 թուականի աշնան սկզբներին երան երանով հայ գաղթական ընտանիքներ մերկ, քաղցած և կիսաառողջ թափուեցին Բագու և սկսեցին թափառել փողոցները «մի փշուր հաց, մի հին հալալ խնդրելով»²:

Բաքվում հանգրվանած վանեցի գաղթականների օգնության գործը կազմակերպելու ուղղությամբ հսկայական աշխատանք ծավալեցին տեղի բարեգործական ընկերությունները՝ այդ նպատակով ստեղծելով գաղթականական գործը կազմակերպող մասնախմբեր³: Այդ գործին իր մեծագույն նպաստը բերեց «Մարդասիրական ընկերությունը» և «Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձությունը», որոնք գաղթականների ծանրագույն վիճակը մեղմելու, սննդով և հագուստով ապահովելու համար տրամադ-

¹ Տե՛ս Տեր-Հարությունյանց Ա., Հայ գաղթականները Բագու եւ նրանց վերադարձը, Բագու, 1903, էջ 19, 21:

² Նույն տեղում, էջ 14:

³ Տե՛ս «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1878, մայիսի 27, N 20:

րեցին նյութական միջոցներ¹: Օգնության գործը կայուն հիմքերի վրա դնելու նպատակով նշված բարեգործական ընկերությունների կողմից ստեղծվեցին հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվեցին Բաքվի ազդեցիկ հայերից Ե. Սարգսյանը, Ա. Կաճկաճյանը, Յ. Աղամյանը և Ա. Կրասիլնիկյանը, իսկ «Մարդասիրական ընկերության» հանձնաժողովում՝ Ա. Մաղաթյանը, Ե. Կրասիլնիկյանը, Ս. Աղամյանը, Ն. Պատվականյանը, Ն. Աբելյանը և Գ. Տեր-Մարգարյանը: Գաղթականներին բժշկասանիտարական անհրաժեշտ օգնություն ցուցաբերեցին բժիշկներ Ա. Աղամիրզյանը և Մ. Ջալյանը²:

«Չը կար կովկասահայ կենտրոնում մի վայր, ուր տաճկահայերն աւելի խնամք վայելած լինէին, մի կտոր հաց աշխատած, քան Բագուն», - գրում էր «Միտսար» ծածկանունով «Գործի» Բաքվի թղթակից Միրզա Տեր-Սարգսյանը³: Վանեցի գաղթականներն սատար կանգնեցին նաև Բաքվի բարեգործ հայուհիները: Տարաբնույթ օգնության կազմակերպման գործում անգնահատելի դեր է ունեցել հատկապես «Մարդասիրական ընկերության» հովանավորությամբ 1887 թ. մայիսին հիմնադրված «Բաքվի հայ կանանց բարեգործական ընկերությունը» (վարչության նախագահ՝ Ա. Մաղաթյան)⁴: Այդ նպատակով «Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձության» կողմից ստեղծված հանձնաժողովում ընդգրկվում են Եղիսաբեթ Սարգսյանը, Աննան Մաղաթյանը, Եղիսաբեթ Կրասիլնիկյանը, Սոֆյա և Յեղիմե Աղամյանցները, Սարիամ Մելիքյանցը, Նեկտարիմե Թումանյանցը, Թամար և Մարգարիտ Կաճկաճյանցները, Սաթենիկ Արտեմյանցը, Շուշանիկ Տեր-Մարգարյանցը և Նատալիա Պատվականյանը⁵: Աբգար ավ. քին Տեր-Յարությունյանցը հետևյալ բնութագրումն է տվել վերջիններիս ազգանվեր գործունեությանը. «Մայր էին նրանք այդ մաշուած անբաղդների համար, մայր՝ բառիս իսկական նշանակութամբ: Քոյրեր էին-սրտակից քրոջ սրտի բոլոր գորովով, խանդով ու եռանդով»⁶: Յայտց կաթողիկոս Սկրտիչ Ա Վանեցին 1898 թ. փետրվարին Բաքվում եղած ժամանակ իր առանձնահատուկ շնորհակալությունն է հայտնել - Բաքվի հայ բարեգործ կանանց՝ վանեցի գաղթականներին բազմաբնույթ օգնություն ցուցաբերելու համար: Օրհնելով նրանց, իր խոսքում Սկրտիչ Խրիմյանը ասել է. «... ասոնք գթութեան քոյրերու դեր կը կատարեն, օրհ-

¹ Տես Տեր-Յարութիւնեանց Ա., նշվ. աշխ., էջ 15:

² Տես նույն տեղում, էջ 15-16, տես նաև Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 111-112:

³ Տես Միտսար [Միրզա Տեր-Սարգսյան], Տաճկահայերի վերադարձը, «Գործ», Թիֆլիս, 1908, հոկտեմբերի 23, N 36:

⁴ Տես «Տարագ», Թիֆլիս, 1892, ապրիլի 19, N 14, էջ 265:

⁵ Տես Աբգար Աւագ Քահանայ Տեր-Յարութիւնեանց, նշվ. աշխ., էջ 15, 20:

⁶ Նույն տեղում, էջ 16-17:

նեա չ ըլլաք, այն ատեն երբ տխրութիւնը զիս կը ճնշէ, ձեր այսպիսի օգնութիւն տեսնելով կը մխիթարուիմ. հա՛, շատ կը մխիթարուիմ»¹:

Հարկ է նշել, որ որքան էլ բարեգործական ընկերությունները փորձում էին ուժերի ներածին չափով օգնության ձեռք մեկնել գաղթականներին, այդուհանդերձ, այդ օգնությունը բավարար չեղավ վերջիններիս անսահման տառապանքներն ամբողջապես մեղմելու: «Նոր-դարը» այս առիթով գրում է. «Բագուում որ փողոցով անցնելու լինէք, կպատահէք միշտ մերկանդամ գաղթականների, որոնք երբեմն նոյն իսկ խմբերով ձեռք են պարզում ողորմութեան և ձանձրացնում անցորդներին: Եւ դրանք գլխաւորապես կանայք և երեխաներ են, որով տեսարանը աւելի ցաւալի է դառնում...»²: Գաղթականների մի խումբ 1897 թ. նոյեմբերի 4-ին Բաքվից տեղափոխվեց Աշգաբադ³: 1897 թ. նոյեմբերի 23-ի տվյալներով, հայ գաղթականների վարակիչ հիվանդանոցում բուժվում էր 351 հոգի, մեծամասամբ կանայք և երեխաներ: Բացի դրանից, 18 հոգի բուժվում էր տեղի հիվանդանոցում: Առողջ տղամարդկանց թիվը 75 էր⁴: Գաղթականների շարքերը հյուժվածությունից և տարափոխիկ հիվանդություններից օրեցօր նոսրանալով՝ 1897 թ. վերջերին նրանց թիվը հասավ 300-ի⁵:

Վանեցի գաղթականները Բաքվից բացի 1896 թ. դեկտեմբերի 11-ին հանգրվանեցին նաև Բաքվի նահանգի Ղուբա քաղաքում: Գաղթականները հիմնականում Վանի մերձակա Խոշաբ գյուղից էին, 5 ընտանիք, թվով 18 հոգի (5 տղամարդ, 5 կին և 8 դեռահաս երեխաներ): Ղուբայից «Մշակին» հղած թղթակցությունում ասվում է. «Գաղթականների հոսանքը այստեղ էլ հասաւ: Երեք օր առաջ, մի ֆուրգոն Ղուբա բերեց Վանի գաւառի Խօշաբ գիւղի հինգ ընտանիքներ, տասն և ութ հոգուց բաղկացած, որոնցից հինգը տղամարդ են, հինգը կանայք, և ութ մանր ծծկեր երեխաներ, բոլորը կիսամերկ, աղքատ, հացի կարօտ, և վերջին թշուառութեան մէջ»⁶: Գաղթականները տեղավորվել էին քաղաքի նախկին հայոց եկեղեցական-ծխական կիսախարխուլ դպրոցում: Գաղթականներին իրենց անմիջական օգնությունն ցուցաբերեցին տեղի հայերը, տրամադրելով հագուստ, սնունդ և առաջին անհրաժեշտության պարագաններ⁷:

Բարեգործական նշված կազմակերպությունները վանեցի գաղթականներին եկեղեցական աղքատանոցում խնամեցին մինչև 1898 թ. մայիսի վերջերը, երբ ստացվեց ցարական կառավարության՝ գաղթականների հայ-

¹ Նույն տեղում, էջ 21:

² «Նոր-դար», Թիֆլիս, 1898, ապրիլի 4, N 58, տես նաև «Արձագանք», Թիֆլիս, 1897, սեպտեմբերի 7, N 103:

³ Տես «Մշակ», Թիֆլիս, 1897, նոյեմբերի 6, N 130:

⁴ Տես «Արձագանք», Թիֆլիս, 1897, նոյեմբերի 23, N 136:

⁵ Տես «Արձագանք», Թիֆլիս, 1897, նոյեմբերի 16, N 133:

⁶ «Մշակ», Թիֆլիս, 1896, դեկտեմբերի 14, դ 146:

⁷ Տես նույն տեղում:

րենիք վերադառնալու մասին հրամանը, նրանց մեծ մասը մեկնեց Վան: Սկրտիչ Ա Վանեցու հորդորանքով գաղթականներին մինչև Բայազետ ուղեկցեց «Եկեղեցական աղքատախնամ հոգաբարձության» նախագահ Աբգար ավ. քին. Տեր-Յարությունյանը¹: Բաքվում մնացած գաղթականները աստիճանաբար սկսեցին հիմնավորվել քաղաքում, աշխատանքի տեղավորվելով նավթահանքերում, տարբեր արհեստանոցներում, կատարելով գիշերային պահակի, դռնապանի և մշակի աշխատանքներ²:

Բաքվի հայությունը Վան-վասպուրականցիներին սատար կանգնեց նաև Առաջին աշխարհամարտի տարիներին:

Այսպես՝ 1915 թ. հուլիսին ռուսական բանակի հանկարծակի նահանջի հետևանքով տեղահան եղավ նաև Վանի, մասամբ նաև՝ Բիֆլիսի (Բաղեշ) վիլայեթի հայ բնակչությունը: Տեղահանված հայությունը Երևանի, Թիֆլիսի, Գանձակի նահանգներից և Կարսի մարզի հայաբնակ գավառներից բացի ապաստան գտավ նաև Բաքու քաղաքում³: Ոչ մեծ թվով փախստականներ (2300 հոգի, այդ թվում՝ 500 երեխաներ) 1915 թ. օգոստոսի 2-ին Թիֆլիսի վրայով հասան Բաքու. «Տասնեակ և հարիւր հազարաւոր մարդիկ՝ տարբեր հասակի, սեռի, հասարակական և նիւթական դիրքի, որոնք դեռ երէկ ապրում էին իրենց հիմնաւորց բնակավայրերում, թնդանօթների թնդիւնների տակ մի քանի օրում ստիպուած եղան այրել սերունդների կառուցած «նաւերը» և շարան շարան շարժուել, փախչել դէպի այն կողմը, ուր մղեցին նրանց պատերազմական հանգամանքները»⁴:

Գաղթական հայերը հիմնականում գյուղացիներ էին, կային նաև արհեստավորներ և մտավորականներ⁵: Բժշկական անբավարար օգնության հետևանքով, տեղ հասած գաղթած հայերից 200-ը մահացան: 1915 թ. հոկտեմբերի 24-ի մեկօրյա վիճակագրության համաձայն՝ Բաքվում արդեն 1570 հայ գաղթական կար (445 ար., 528 իգ. և 597 երեխա): Գաղթականներից վերադարձել և այլ վայրեր էին մեկնել 100, մահացել էին 170 հոգի⁶: Հայ փախստականներին խնամող Բաքվի կոմիտեի տնտեսական բաժանմունքի կողմից 1915 թ. նոյեմբերին փախստականների շրջանում անցկացված մարդահամարի տվյալներով նրանց ընդհանուր թիվն այդ

¹ Տես «Նոր-դար», Թիֆլիս, 1898, հունիսի 20, N 108, տես նաև Տեր-Յարութիւնեանց Ա., նշվ. աշխ., էջ 22:

² Տես «Գործ», Թիֆլիս, 1908, հոկտեմբերի 23, N 36:

³ Տես Վարդանեան Ե., Վասպուրականի նահանջ բիւրոցը, Պոսթոն, 1920, էջ 129, տես նաև Арутюнян А., Первая мировая война и армянские беженцы (1914-1917 гг.), автореф. диссерт. на соиск. уч. степ. канд. ист. наук, Ереван, 1989, տես նաև Սարգսյան Հ., Արևմտահայերի գաղթը - Արևելյան Հայաստան 1915 թ. հետո, «Հայոց ցեղասպանություն: Պատճառներ և դասեր», մաս 3, Երևան, 1995, էջ 36-66:

⁴ Գրիգորեան Գ., Հայ փախստականները Բազում, (I), «Գործ», Բազու, 1917, մարտ, N 3, էջ 132:

⁵ Տես ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 252, թ. 2, տես նաև Հարությունյան Ա., Արևմտահայ գաղթականությունը Բաքվում Առաջին աշխարհամարտի տարիներին, «Իրան-Մամէ», Երեւան, 1995, N 2, էջ 5:

⁶ Տես «Արեւ», Բազու, 1915, նոյեմբերի 5, N 191:

ժամանակ 1936 (985 ար., 951 իգ.) էր: Սեռերի թվական մոտավոր տվյալների այս հավասարակշռությունը վկայում է այն մասին, որ գաղթականները տեղահան էին եղել ընտանիքներով: Ընդ որում, 1936 հոգուց 126-ը եղել են մինչև 4 տարեկան (71 տղա, 55 աղջիկ), 5-14 տարեկան երեխաների թիվը 499 էր (268 ար., 231 իգ.), իսկ 15-19 տարեկաններինը՝ 153 (67 ար., 86 իգ.): Սեծամասնություն են կազմել 20-59 տարեկանները՝ 1026 հոգի (500 ար., 526 իգ.), երբ 60-69 տարեկանները եղել են 61 հոգի (28 ար., 33 իգ.), 70 և ավելի տարիք ունեցողները՝ 25 (17 ար. 8 իգ.), իսկ անհայտ տարիքի են եղել ընդամենը 46 (34 ար., 12 իգ.) հոգի¹: Բոլոր փախստականներն ազգությամբ հայ էին (միայն մեկն էր ասորի), ըստ դավանանքի՝ հայ առաքելական (միայն մեկը՝ լյութերական), ըստ հպատակության՝ բոլորը թրքահպատակներ էին (միայն 4-ը՝ պարսկահպատակ և 1-ը՝ ռուսահպատակ)², ըստ բնակության վայրերի՝ մեծամասնությունը գաղթել էր Վանի նահանգից: 1930 հոգուց 1711-ը Վանից էին, 48-ը՝ Բիթլիսից, 11-ը՝ Էրզրումից, 8-ը՝ Սուշից³: Մնացած 152-ի նախկին բնակության վայրերը նշված չեն: 1915 թ. դեկտեմբերին Հայկավանում անցկացված տարեվերջյան մարդահամարի տվյալներով փախստականների թիվը հասնում էր շուրջ 2000-ի՝ առանց հաշվելու որբանոցներում տեղավորված 300 որբերին⁴:

Առաջին աշխարհամարտի տարիներին Վան-Սալմաստ-Նախիջևան ուղղությամբ արևմտահայ փախստականների հոսքը Բաքու շարունակվեց նաև հետագայում: 1916 թ. հունվարի դրությամբ, նրանց թիվը հասել էր 2412-ի, որոնցից 2360-ը հաստատվել էին Հայկավանում, իսկ 52-ը՝ քաղաքի տարբեր շրջաններում⁵: Նույն տարվա մարտին գաղթականների թիվը 2666-եր, որոնցից 300-ը ցրված էին քաղաքի տարբեր մասերում, մնացյալն ապրում էր Հայկավանում⁶: Համաձայն Կ. Պոլսի Պատրիարքարանի տվյալների՝ Բաքվի նահանգում հանգրվանել էին ավելի քան 2900 գաղթականներ (900 ար. 1000 իգ., և 1000 երեխա)⁷: Բաքվում հաստատված հայ գաղթականությունը նվազեց 1916 թ. մարտ-հունիս ամիսներին՝ հասնելով 2232 հոգու⁸, իսկ 1916 թ. հունիսի տվյալներով Հայկավանում -

¹ Տես Գրիգորեան Գ., Հայ փախստականները Բազում, (I), «Գործ», Բազու, 1917, մարտ, N 3, էջ 133-135:
² Տես նույն տեղում, էջ 136:
³ Տես նույն տեղում:
⁴ Տես Ստեփանեան Յ., Հայ փախստականները Բազում, (II), «Գործ», Բազու, 1917, մարտ, N 3, էջ 1-43:
⁵ Տես ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 252, ք. 5:
⁶ Տես ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 252, ք. 5:
⁷ Տես Ազատեան Լ., Հայ որբերը Սեծ եղեռնի, Լոս Անձելլոս, 1995, էջ 42, տե՛ս նաև ՖАрмяне и воїна!, Одесса, 1916, март, N 1, стр. 15:
⁸ Տես ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 270, ք. 17:

մնացել էր ընդամենը 1340 գաղթական¹, որոնցից 236-ը եղել են 1-14, 36-ը՝ 15-18 տարեկան աղջիկներ, 373-ը՝ 1935, 85-ը՝ 36-45 և 93-ը՝ 45-ից բարձր տարիք ունեցող կանայք: Բացի այդ, կային 15-18 տարեկան՝ 60 և 18-ից բարձր տարիք ունեցող 185 տղաներ²:

Բաքվում հանգրվանած գաղթահայության մեջ առանձնակի տեղ են զբաղեցրել որբերը: 1915 թ. օգոստոսի սկզբներին էջմիածնից լուր ստացվեց, որ վանքի բակում հավաքվել են շուրջ 3000 որբեր, որոնց շարքերը հյուծվածությունից և տարափոխիկ հիվանդություններից օրեցօր նոսրանում են: Բաքվի գաղթականական կոմիտեի որբախնամ հանձնաժողովի կողմից որբերի մի մասին էջմիածնից Բաքու տեղափոխելու նպատակով այդտեղ մեկնեցին Ա. Սերեբրյակյանը և Ռ. Օհանջանյանը: Օգոստոսի 29-ին սանիտարական գնացքով 300 որբեր տեղափոխվեցին Բաքու, որոնցից 5-ը ճանապարհին մահացան, իսկ 20-ին թողեցին թիֆլիսում³: Մեկ այլ տեղեկության համաձայն՝ Բաքվում հանգրվանած հայ որբերի թիվը հասնում էր 550-ի⁴: Օգոստոսի 29-ից մինչև հոկտեմբերի 1-ը որբերից մահացան 20-ը (11 տղա, 9 աղջիկ)⁵: Մինչև 1915 թ. աշունը Հայկականի 4 որբանոցներում մնացել էր 253 որբ⁶, իսկ 1917 թ. մայիսի 1-ին որբերի թիվը հասավ 281-ի (134 ար., 147 իգ.)⁷:

Բաքվում հաստատված արևմտահայ գաղթականների բժշկական և նյութական ապահովության գործում ներգրավված էին հասարակության բոլոր շրջանակները: Բարեգործական կազմակերպությունները Բաքվի - հայերի մեծագույն աջակցությամբ հսկայական ջանքեր գործադրեցին արհավիրքի ենթարկված արևմտահայության գոյությունը պահպանելու ազգանվեր գործում: Բաքվում գործող թիֆլիսի Ազգային կենտրոնական բյուրոյի Բաքվի մասնաճյուղը դեռևս 1914 թ. նոյեմբերի նիստերից մեկում որոշել էր Բյուրոյին կից ստեղծել «Գաղթականական կոմիտե»: Նրա անդամները պետք է լինեին «Մարդասիրական ընկերությունից», «Հայոց կուլտուրական միությունից», «Հայ ուսուցչական միությունից» և եկեղեցու կողմից ընտրված մեկական հոգի: Նորաստեղծ կոմիտեի անդամներ ընտրվեցին Հ. Տեր-Միքայելյանը (նախագահ), Կ. Պարունակյանը (քարտուղար), Ս. Ադամյանը, Ե. Թաղիանոսյանը, բժ. Թ. Ջաքարյանը, Ա. Պա-

¹ Տես «Արեգ», Բագու, 1916, հունիսի 22, N 35, տես նաև ՖАрмяне и война!, Одесса, 1916, октябрь, N 8, стр. 10:

² Տես Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 7:

³ Տես ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 30, ք. 70, տես նաև «Հորիզոն», Թիֆլիս, 1915, սեպտեմբերի 4, N 199, տես նաև Դրամական հաշիւ Բագուի Հայ գաղթականական կոմիտեի 1915 թ. օգոստոսից մինչև 1917 թ. յունուարի 1-ը, Բագու, 1917, էջ 45, տես նաև «Հորիզոն», Թիֆլիս, 1915, սեպտեմբերի 4, N 199:

⁴ Տես Իշխանեան Բ., Աղէտի եւ տառապանքի աշխարհից (այց թիրջահայ փախստականներին), Թիֆլիս, 1915, էջ 20:

⁵ Տես ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 30, ք. 70, տես նաև Դրամական հաշիւ Բագուի Հայ գաղթականական կոմիտեի 1915թ. օգոստոսից մինչև 1917թ. յունուարի 1-ը, էջ 45:

⁶ Տես ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, ք. 93:

⁷ Տես նույն տեղում, ֆ. 223, ց. 1, գ. 251, ք. 17, տես նաև գ. 30, ք. 19:

րոնյանը, Պ. Ծովհանյանը և ավելի ուշ նաև Գ. Պապյանը¹: Գաղթականական կոմիտեն աշխատանք հայթայթող գաղթականներին օգնելու նպատակով ստեղծել էր նաև «Աշխատանքի բյուրո», որը մինչև 1915 թ. աշխատանքի տեղավորեց մոտ 500 հոգու²:

Բաքվում հանգրվանած հայ որբերի օգնության գործը կանոնակարգելու նպատակով «Հայ ուսուցչական միության» նախաձեռնությամբ 1915 թ. սեպտեմբերի 13-ին հիմնում է «Երեխաների աշխարհ» ընկերությունը³, և հրատարակում «Նվեր որբերին» միօրյա թերթը⁴:

Գաղթականական գործի կազմակերպման գործում իրենց նպաստն են ունեցել նաև Ազգային բյուրոյի (կամ՝ Թիֆլիսի Ազգային կենտրոնական բյուրո) Բաքվի մասնաճյուղը, Բաքվի քաղաքային ինքնավարության կողմից ստեղծված գաղթականական հանձնաժողովը⁵ և գաղթականների օգնության Բաքվի միջազգային կոմիտեն, որի պատվավոր նախագահը Բաքվի քաղաքագլուխ Լ. Բիչն էր⁶:

1915 թ. աշնանը, երբ սկսվեց արևմտահայ գաղթականների նոր հոսքը Բաքու, «Հայ կանանց կոմիտեն» կարճ դադարից հետո կրկին վերսկսեց իր գործունեությունը՝ շեշտը գլխավորապես դնելով գաղթականների տարաբնույթ հարցերի վրա: Առաջին հերթին զբաղվեց նրանց սննդի և հագուստի խնդիրները լուծելով⁷:

Բարեգործական ընկերությունների ուշադրությունից դուրս չի մնացել նաև գաղթականների կրթության հարցերը: Այսպես՝ Բաքվի «Հայ ուսուցչական միության» նախաձեռնությամբ և Մարդասիրական ընկերության հովանավորությամբ 1915 թ. նոյեմբերի 2-ին Հայկականում բացվում է գաղթականական երկսեռ դպրոց, որտեղ սովորում էին շուրջ 400 երեխաներ^{8,9}: Բաքվի հայոց մարդասիրական ընկերության հրավերով դասավանդել է վանեցի վաստակաշատ մտավորական, հասարակական գործիչ Վարազդատ Տերոյանը (Դերոյան)¹⁰: Դպրոցը գործեց մինչև 1918 թ. մարտ ամիսը¹¹:

¹ Տես Դրամական հաշիւ Բազուի հայ գաղթականական կոմիտէի 1915 թ. օգոստոսից մինչև 1917 թ. յունւարի 1-ը, էջ 38:

² Տես ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 215, ք. 93, տես նաև Ստեփանեան 3., Հայ փախստականները Բազուում, (II), «Գործ», Բազու, 1917, մարտ, N 3, էջ 144:

³ Տես «Հորիզոն», Թիֆլիս, 1915, սեպտեմբերի 19, N 211:

⁴ Տես «Հորիզոն», Թիֆլիս, 1915, դեկտեմբերի 20, N 286:

⁵ Տես «Մշակ», Թիֆլիս, 1915, հունվարի 6, N 3:

⁶ Տես «Մշակ», Թիֆլիս, 1915, փետրվարի 14, N 33:

⁷ Տես Տեղեկագիր եւ հաշիւ 1915 թ. գործունեութեան Հայոց Մարդասիրական Ընկերութեան յանուն ս. Գրիգոր Լուսաւորչի, Բազու, 1917, էջ 11:

⁸ Տես «Հորիզոն», Թիֆլիս, 1915, դեկտեմբերի 17, դ 283, տես նաև ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 44, ք. 39, տես նաև Դրամական հաշիւ Բազուի հայ գաղթականական կոմիտէի 1915 թ. օգոստոսից մինչև 1917 թ. յունւարի 1-ը, էջ 46-47:

⁹ Տես նույն տեղում, դեկտեմբերի 17, N 283, տես նաև Դրամական հաշիւ Բազուի հայ գաղթականական կոմիտէի 1915 թ. օգոստոսից մինչև 1917 թ. յունւարի 1-ը, էջ 46-47:

¹⁰ Տես Տերոյան Վ., Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, արաքաբանը և ծանոթագրությունները Բ. Սահակյան, հրատարակության պատրաստեց Ե. Դերոյան, Երևան, 2006, էջ 9:

¹¹ Տես ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 44, ք. 39:

Արևմտահայ գաղթականներին թույլատրվեց Բաքվում մնալ մինչև 19-16 թ. մայիսի 1-ը, իսկ այնուհետև՝ մինչև հունիսի 1-ը¹: Կառավարության կարգադրության համաձայն՝ գաղթականների մի մասը հեռացավ Բաքվից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գաղթականների մեծագույն մասը հաստատվել էր Հայկավանում և չէր կարող եապես ազդել քաղաքի կյանքի վրա, և, բացի այդ, ծնռանը այլ վայրեր փոխադրելը կապված էր նյութական ու ֆիզիկական մեծ դժվարությունների հետ, ուստի 1916 թ. հոկտեմբերին Կովկասյան ռազմաճակատում գաղթականների գործերի գլխավոր լիազոր գեներալ-մայոր Վ. Մ. Թամամյանը (Թամամյան) տեղեկացրեց, որ նրանց թույլատրվում է անորոշ ժամանակով մնալ Բաքվում²: Արևմտահայ գաղթականների վերադարձը հայրենի եզերք հնարավոր դարձավ մասամբ 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ ժամանակավոր կառավարությունը 1917 թ. ապրիլի 26-ի որոշմամբ վերացրեց Արևմտյան Հայաստանում ցարական կառավարության ստեղծած ռազմական կառավարչաձևը, և հաղթահարվեց արհեստական այն արգելքը, որը խոչընդոտում էր արևմտահայերի վերադարձը հայրենիք. կազմվեց վերաբնակեցման ծրագիր³: 1917 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ Բաքվում արևմտահայ գաղթականների թիվը նվազելով՝ հասավ 705-ի⁴:

Այսպիսով՝ Բաքվի հայ բնակչությունը մեծ դերակատարություն է ունեցել իր ժողովրդի արհավիրքի ենթարկված մի զանգված ընդունելու, անօրբելու և նրա գոյությունը պահպանելու ազգանվեր գործում: Օգնությունն իրականացնողների գործիմացության, եռանդի և նվիրվածության շնորհիվ հնարավոր եղավ կանխել մարդկային մեծաթիվ կորուստները, պահպանել հազարավոր տարագրվածների կյանքը:

АРМЯНСКИЕ БЕЖЕНЦЫ ИЗ ВАН - ВАСПУРАКАНА В БАКУ В КОНЦЕ XIX ВЕКА И В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Геворг Степанян

Резюме

Пережившие организованную Абдулом Гамидом резню более 500 ванских беженцев осенью 1896 г., а затем в октябре 1897 г. нашли убежище в Баку, где оставались до конца мая 1898 г. Бакинские армяне поддержали беженцев из Ван-Васпуракана и во время Первой

¹ Տես նույն տեղում, ֆ. 27, ց. 1, գ. 251, թ. 15:

² Տես նույն տեղում, ֆ. 70, ց. 1, գ. 436, թ. 15:

³ Տես Դանիելյան Է., *Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ. (շարժը, կացությունը, թվակազմը)*, պատմ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 1997, էջ 13:

⁴ Հարությունյան Ա., *նշվ. աշխ.*, էջ 7:

мировой войны. Благодаря армянам Баку стало возможным сохранить тысячи жизней беженцев.

**THE ARMENIANS MIGRATED FROM VAN-VASPUKAKAN IN BAKU AT THE
END OF 19TH CENTURY AND DURING THE YEARS OF WORLD WAR I.**

Gevorg Stepanyan

Summary

In the autumn of 1896, later in October of 1897 more than 500 refugees from Van-Vaspurakan, saved from massacres organized by the sultan Abdul Hamid, took refuge in Baku. They stayed there up to the end of May, 1898. The Armenians of Baku supported the Armenians of Van-Vaspurakan during the years of the First World War as well. The Armenian population of Baku played a great role in receiving, hosting of the part of the Armenian people had exposed to horrors and protection of their lives.

**К ВОПРОСУ О ВОЗВРАЩЕНИИ В ЛОНО ТРАДИЦИОННОЙ
ЦЕРКВИ ИНОКОНФЕССИОНАЛЬНЫХ АРМЯН (НА ПРИМЕРЕ
РОССИЙСКИХ АРМЯН-ФРАНГОВ)**

Виктор Акопян

Кандидат исторических наук

Россия

В условиях потери армянским народом своей государственности Армянская апостольская церковь (ААЦ), кроме чисто религиозных функций, всегда осуществляла общественно-политическую миссию: на исторической родине настраивала народ на возрождение государственности, а в диаспоре – на сохранение национального самосознания.

Президент Республики Армения Серж Саргсян в своем выступлении перед армянской диаспорой США в октябре минувшего года произнес судьбоносные слова, что армяне остаются армянами, к какой бы конфессии они ни относились. Тем самым им подчеркивалось верховенство национального над конфессиональным.

В этой связи возникает вопрос: как в функционировании общин совместить принадлежность одних армян к национальной ААЦ, выполняющей этнообъединяющую (интегративную) роль, а других – к конфессиям, которые исторически объективно способствовали «деэтнизации» армянства.

В данной статье рассматривается проблема «возвращения» или «восстановления» (реинтеграции) в традиционной национальной конфессии отдельных групп армян, предки которых волей судьбы на исторической родине вынуждены были принять католицизм.